ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հոկտեմբերի 2013թվականի № 151- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ, ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ, ՇՏԱԲԻ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԵՐԸ, ՄՏԱՀՂԱՑՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԳԻՐԸ, ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ, ԻՐԱՎԻՃԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19- րդ հոդվածի 1-ին կետով, «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. հունվարի 30-ի «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգի» N134-Ն որոշման 5-րդ կետի և ՀՀ Սյունիքի մարզպետի 2013թ. փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2013 թվականի հիմնական միջոցառումների պլանը» N10-Ա որոշման, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի 2013թ. հոկտեմբերի 2-ի N20/674 զեկուցագիրը, **ո ր ո շ ու մ եմ.**

1. 2013 թվականի հոկտեմբերի 16-ին Սյունիքի մարզում անցկացնել հրամանատարաշտաբային ուսումնավարժություն՝ «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքում ուժեղ երկրաշարժի դեպքում» թեմայով:

2. Ուսումնավարժությանը նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով հաստատել՝

1) ուսումնավարժության ղեկավար կազմը՝ համաձայն թիվ 1 հավելվածի.

2) ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն թիվ 2 հավելվածի.

3) միջնորդական խմբի կազմը՝ համաձայն թիվ 3 հավելվածի,

4)ուսումնավարժության մտահղացման բացատրագիրը, ուսումնավարժության անցկացման պլանը, գործնական միջոցառումների անցկացման պլանը, իրավիճակի զարգացման պլանը, ղեկավարման սխեման՝ համաձայն թիվ 4, 5, 6, 7, 8 հավելվածների:

3. ՈՒսումնավարժությանը ընդգրկել՝

ՀՀ Սյունիքի մարզպետարանը, մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը, մարզի տարհանման հանձնաժողովը, Սյունիքի մարզային փրկարարական վարչությունը, Կապան քաղաքային համայնքի ղեկավար կազմը, ՀՀ ՊՆ Կապանի թիվ 54122 զորամասը, «Հայռուսգազարդ» ՓԲԸ Սյունիքի ԳԳՄ-ն, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ Հարավային տարածքային մասնաճյուղի Կապան տեղամասը:

4. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Ա. Հարությունյանին՝

1) ապահովել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի մշակումը՝ համաձայն ՀՇՈՒ-ի նախապատրաստման օրացուցային պլանի.

2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի.

3) ապահովել համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ ուսումնավարժության անցկացման ընթացքում.

4) Կապան քաղաքային համայնքի ղեկավարի հետ ուսումնասիրել հավանական իրավիճակը, բնակչության պաշտպանությանն ու կենսաապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման կարգը.

5) ճշգրտել «ՈՒժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Սյունիքի մարզի գործողությունների պլանը».

6) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2013թ. հոկտեմբերի 13 -ին:

5. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալ Վ. Գիգորյանին՝

1) ապահովել գործնական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով.

2) նախապատրաստել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման համար անհրաժեշտ ծախսերի հաշվարկը և մինչև 2013թ. սեպտեմբերի 10-ը ներկայացնել հաստատման:

6. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան պլանները, համալրել անձնակազմը համապատասխան գույքով և հանդերձանքով.

2) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին.

3) «ԱրմենՏել» ՓԲԸ «Հարավային տարածքի» տնօրեն Վ. Վարդանյանին՝ պատրաստ վիճակի բերել կապի և ազդարարման միջոցները: Ապահովել կայուն և անխափան կապ մասնակից մարմինների, ծառայությունների ու արձագանքող ուժերի հետ: Կառավարման կետերն ապահովել կապի և ազդարարման տեխնիկական ու շարժական միջոցներով.

4) մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. ՈՒստաբաշյանին՝ պատրաստ վիճակի բերել ծառայության արձագանքող ուժերը՝ արտակարգ իրավիճակներում գործելու համար, ճշգրտել վթարավերականգնողական խմբերի կազմը և նրանց ապահովվածությունը.

5) մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքային գործունեության բաժնի պետ Ա.Աբգարյանին՝ պատրաստ վիճակի բերել ծառայության արձագանքող ուժերը՝ արտակարգ իրավիճակներում գործելու համար.

6) մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Ս. Աղաբեկյանին՝ պատրաստ վիճակի բերել համապատասխան տրանսպորտային միջոցները՝ արձագանքող ուժերին դեպքի վայր տեղափոխելու և տարահանվողներին տարահանելու նպատակով.

7) մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ա. Ծատրյանին՝ ճշգրտել ծառայության խնդիրներն ու լուծման կարգը: Պատրաստության բերել մարզի բուժհիմնարկները՝ արտակարգ իրավիճակներում դրանք ծավալելու համար.

8) մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Թ.Ղազարյանին՝ ճշտել ծառայության ուժերի պատրաստականությունը, արձագանքող ուժերին ՎՔՆ-ով ապահովելու համար.

9) մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյանին՝ ճշտել ծառայության ուժերի պատրաստականությունը, տարահանված բնակչությանը սննդով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովելու համար.

10) ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետ, ոստիկանության գնդապետ Վ. Ավագյանին՝ ճշտել ծառայության պատրաստականությունը ԱԻ-ում գործելու դեպքում և բնակավայրից բնակչության տարահանման երթուղիներն ու տեղաբաշխման վայրերը.

11) «ՀԷՑ» ՓԲԸ «Տաթև» մասնաճյուղի տնօրեն Ա. Գրիգորյանին՝ ստուգել ծառայության վթարատեխնիկական խմբերի անձնակազմերի հագեցվածությունը հաշվեցուցակային գույքով, սարքավորումներով և տեխնիկայով.

12) մարզային տարհանման հանձնաժողովի նախագահ Վ. Գրիգորյանին՝ ստուգել տարհանման հանձնաժողովի ընդունման և տեղաբախշման կետերի պատրաստությունը: Ճշտել տարահանման և տեղաբախշման համար օգտագործվող տրանսպորտի քանակը, տարահանվող բնակչության հաշվարկը ըստ բնակավայրի տեղաբախշման.

13) Կապան համայնքի ղեկավար Ա. Հայրապետյանին՝

1) ճշտել համայնքի ուժերի և կազմավորումների թվաքանակը

2) արձագանքող ուժերը բերել պատրաստ վիճակի:

14) «ՀայՌուսԳազարդ»ՓԲԸ Սյունիք ԳԳՄ-ի տնօրեն Ա. Խաչատրյանին՝ պատրաստ վիճակի բերել ծառայության արձագանքող ուժերը՝արտակարգ իրավիճակներում գործելու համար,ճշգրտել վթարավերականգնողական խմբերի կազմը և նրանց ապահովվածությունը.

15) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ Հարավային տարածքային մասնաճյուղի Կապան տեղամասի տնօրեն Հ. Գևորգյանին՝ պատրաստ վիճակի բերել ծառայության արձագանքող ուժերը՝ արտակարգ իրավիճակներում գործելու համար, ճշգրտել վթարավերականգնողական խմբերի կազմը և նրանց ապահովվածությունը

16) Կապանի թիվ 54122 զորամասի հրամանատարին՝ ճշտել փոխհամագործակցության պլանը, ուսումնասիրել հավանական իրավիճակը, պատրաստ լինել բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացմանը:

7. Սույն որոշումը տրամադրել ուսումնավարժության մասնակիցներին:

8. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2013թ. հոկտեմբերի 10
ք. Կապան